

«ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների ընդհանուր ժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՄՊՀ մասնաճյուղին կից Ա.Հ. Երիցյանի անվան վարժարանի աշակերտների ուսման վարձի գեղչման լրամշակված ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ հաստատելու մասին
(կազմված է «___»_____ 2019թ. և բաղկացած է 1 թերթից)

ք.Երևան, Վարդանանց փող., 17

«___»_____2019թ.

Մասնակցեցին Ընկերության երկու հիմնադիրները.

1. «ՄԻԼԼԵՆՆԻՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ս.Բ. Մնգրյանի,
2. ՀՀ քաղաքացի Ն. Հ. Տոնեյանը,
և Ընկերության տնօրեն Ա.Լ. Մամյանը

Քվեարկությամբ ընդհանուր ժողովը որոշեց (միաձայն) ժողովի նախագահ ընտրել Ս.Բ.Մնգրյանին, քարտուղար՝ Ն.Հ.Տոնեյանին:

Օրակարգ՝ Վարժարանի աշակերտների ուսման վարձի գեղչման լրամշակված Կանոնակարգի հաստատում:

Ս.Բ. Մնգրյանը առաջարկեց քվեարկության դնել ընդհանուր ժողովի օրակարգի հարցը:
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց

1. Հաստատել Մ.Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ Մասնաճյուղին կից Ա.Հ. Երիցյանի անվան վարժարանի աշակերտների ուսման վարձի գեղչման լրամշակված Կանոնակարգն ըստ Հավելվածի:

2. Հանձնարարել Ընկերության տնօրեն Ա.Լ. Մամյանին ուսման վճարի գեղչերը տրամադրել Կանոնակարգի պահանջներին համապատասխան:

3. Որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ս.Բ. Մնգրյանին:

ՄՊՀ Մասնաճյուղի
Երիցյան վարժարան»
ՄՊԸ-ի հիմնադիրներ՝

«ՄԻԼԼԵՆՆԻՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից՝ _____

ստորագրություն

ազգանուն

ստորագրություն

ազգանուն

«ՄՊՀ Մասնաճյուղի
Երիցյան վարժարան»
ՄՊԸ-ի տնօրեն՝

ստորագրություն

ազգանուն

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Ն. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1 Սույն Կանոնակարգը սահմանում է ՄՊՀ Մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) Երիցյան վարժարանի (այսուհետ՝ Վարժարան) աշակերտների ուսման վարձի գեղջման կարգը:
- 1.2 Վարժարանում կիրառվում են ուսման վարձի գեղջեր՝ ըստ սոցիալական խմբերի և առաջադիմության:
- 1.3 Հիմնադրի որոշմամբ ուսման վարձի գեղջեր կարող են սահմանվել այլ չափանիշների հիման վրա:
- 1.4 Ուսման վարձի գեղջը տրամադրվում է տնօրենի հրամանով:
- 1.5 Աշակերտի հեռացման (ազատման) և վերականգնման դեպքում (անկախ հիմքից) նախկինում տրամադրված գեղջը չի վերականգնվում:

II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 2.1 Պատշաճ վարքագիծ¹ ունենալու դեպքում ուսման վարձի գեղջ տրամադրվում է հետևյալ սոցիալական խմբերին.
 - 2.1.1 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին - 50%
 - 2.1.2 միակողմանի ծնողազուրկ /միածնող/ երեխաներին - 25%
 - 2.1.3 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխաներին - 25%
 - 2.1.4 Մասնաճյուղում և Վարժարանում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ընտանիքի աշակերտներին (սկսած 2-րդից) – 25%
 - 2.1.5 Մասնաճյուղի և (կամ) Վարժարանի աշխատակիցների երեխաներին - 25%

¹ Սույն Կանոնակարգի իմաստով աշակերտի պատշաճ վարքագիծը վարժարանի ներքին կանոնների պահպանումն է՝ կարգապահական տույժի բացակայությունը:

- 2.1.6 սոցիալապես անապահով ընտանիքների (որոնք հաշվառված են պետական սոցիալական ծառայությունների կողմից կիրառվող ընտանիքների ապահովության գնահատման համակարգում և ունեն անապահովության սահմանային միավորից բարձր միավոր) սովորողներին - 10%
- 2.2 Պատշաճ վարքագիծ ունենալու դեպքում տվյալ կիսամյակի ուսման վարձի 20% զեղչ տրամադրվում է նաև դրան նախորդող կիսամյակում կիսամյակային գերազանց (9 և 10) գնահատականներ ունեցող սովորողներին:
- 2.3 Առանձնահատուկ դեպքերում, հիմնադրի որոշմամբ ուսման վարձի զեղչ կարող է սահմանվել այլ չափանիշների հիման վրա:
- 2.4 Եթե սովորողը բավարարում է զեղչի՝ 2.1-2.2 կետերում սահմանված պայմաններին, ապա համապատասխան զեղչերը գումարվում են:
- 2.5 Ուսման վարձի զեղչ տրամադրվում է Ծնողի (Խնամակալի) դիմումի և զեղչման հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

III. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԸ ԶԵՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1. Աշակերտի ուսման վարձի զեղչը չեղարկվում է, եթե.
- 3.1.1 Աշակերտը խախտել է դպրոցի ներքին կանոնները կամ հասարակական կարգը, որի պատճառով տնօրենի հրամանով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:
- 3.1.2 Վերացել են զեղչման հիմք հանդիսացած հանգամանքները:
- 3.2 Զեղչը չեղարկվում է տնօրենի հրամանով, ուսումնական մասի վարիչի զեկուցագրի հիման վրա 3.1 կետում նշված հանգամանքների առաջանալու պահից:
- 3.3 Ուսումնական մասի վարիչը զեղչը չեղարկելու մասին գրավոր իրազեկում է աշակերտի Ծնողին (Խնամակալին):
- 3.4. Զեղչը չեղարկելու մասին Հրամանի քաղվածքը կցվում է աշակերտի անձնական գործին: